

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱՄԼԵՏԻ ՄԱԴՈՅԱՆ

**ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ
ԼԵԶՎԱԿԱՆ և ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(անգլերեն փաստական նյութի հիման վրա)**

Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.դ., պրոֆ Ս.Ք. Գասպարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆ. Գ. Ռ. Գասպարյան

բ.գ.թ., դոց. Գ. Ռ. Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ – Ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2018թ. դեկտեմբերի 19-ին՝ ժամը 11:00-ին ՀՀ ԲՈԿԻ -ի Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0025, Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. նոյեմբերի 8-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
բ.գ.դ., պրոֆեսոր



Ե. Լ. Երզնկյան

Ուսումնասիրությունը նվիրված է համացանցում կիրառվող անգլերեն հաղորդակցության մեջ գերիշխող լեզվական և արտալեզվական միավորների քննությանը: Համացանցային հաղորդակցությունը որպես մարդկային ճանաչողության յուրահատուկ դրսևորում իր բնույթով սոցիալական է, քանզի այստեղ լավագույնս ի հայտ են գալիս անհատների միջանձնյա հարաբերությունները, որոնք կարևորվում են սույն հաղորդակցության իրականացման համատեքստում: Այս կանոնակարգված գործընթացում մասնավորապես էական դեր է խաղում հաղորդակցական համագործակցությունը, որի իրականացմանը նպաստում են նորարարական տեխնոլոգիաները՝ համակարգելով հաղորդակցական ակտերը և բարենպաստ պայմաններ ստեղծելով հաղորդակցական ձախողումներից խուսափելու համար:

Հայտնի է, որ համաժամանակյա համացանցային հաղորդակցությունը տեղի է ունենում այն դեպքում, երբ հաղորդակցվողները միաժամանակ են հայտնվում առցանց տիրույթում, այսինքն՝ այստեղ առկա են առերես հաղորդակցությանը բնորոշ յուրահատկություններ: Մինչդեռ էլեկտրոնային նամակները, մեկնաբանությունները տարաժամանակյա հաղորդակցության տեսակներ են, որոնք առանձնանում են հաղորդակցության մյուս նմուշներից ոչ միայն լեզվական միավորների կիրառությամբ, այլև սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով: Սույն հաղորդակցական տարատեսակներում բանավոր և գրավոր լեզվի դրսևորումները որոշարկելիս հարկ է հաշվի առնել հարալեզվական միջոցների, համառոտագրությունների, հապավումների և հարատեքստի դերը: Առերես հաղորդակցությանը բնորոշ հարալեզվական ցուցիչները այստեղ փոխարինվում են կետագրական նշաններով, հուզապատկերներով և շարժական հուզապատկերներով (GIF): Ընդ որում՝ հուզանշանների կիրառությունը որոշակիորեն ցույց է տալիս օգտատերերի սոցիալական կեցվածքը, նրանց համակած զգացմունքները: Սոցիալական կեցվածք ասելով՝ հասկանում ենք օգտատերերի ճանաչողական, հաղորդակցական կարողությունների դրսևորումները, որոնք օգնում են ճիշտ ներկայացնելու որևէ տեղեկատվություն և համապատասխանաբար մեկնաբանելու համացանցում առկա տարբեր թեմաների առնչվող նյութեր:

Հետազոտության **առարկան** *համացանցային դիսկուրսի լեզվական և արտալեզվական* դրսևորումներն են համաժամանակյա և տարաժամանակյա հաղորդակցական տարատեսակներում: Անդրադարձ է արվում նաև համացանցային խոսքում *հարալեզվական* միավորների կիրառական յուրահատկություններին:

Ատենախոսության **նպատակն է** ուսումնասիրել համացանցային դիսկուրսի խոսքային և ոչ խոսքային միջոցները, դրանց իմաստային դաշտը և վեր

հանել բանավոր խոսքին հատուկ ժանրային առանձնահատկությունները: Սույն նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել համացանցային հաղորդակցության սոցիալ - հոգեբանական առանձնահատկությունները:
- Քննության առնել համացանցային դիսկուրսի տեսական սահմանումները միջգիտակարգայնության դիրքերից և վեր հանել բանավոր կամ գրավոր խոսքային տարրերի կիրառությունները համացանցային հաղորդակցության մեջ:
- Քննել քաղաքավարության դերը համացանցային հաղորդակցության մեջ:
- Ուսումնասիրել հուզանշանների գործառույթը՝ կախված հաղորդակցվողների վերաբերմունքային, հոգեբանական յուրահատկություններից:
- Որոշարկել էլեկտրոնային նամակների լեզվական և նպատակային հենքը:
- Լուսաբանել զեղչման՝ որպես համացանցային հաղորդակցության կարևորագույն բաղադրիչի տեսական և գործնական յուրահատկությունները:
- Որոշարկել համառոտագրությունների և հապավումների կիրառման դերը լեզվական տնտեսման համատեքստում:

Աշխատանքի ***արդիականությունը*** պայմանավորված է համացանցային դիսկուրսի՝ ժամանակակից աշխարհում աստիճանաբար ավելի լայն թափ ստացող կիրառությամբ և հետևաբար՝ լեզվական, հարալեզվական և արտալեզվական գործառույթ կատարող միջոցների քննության ու լուսաբանման կարևորությամբ:

Աշխատանքի ***գիտական նորույթը*** պայմանավորված է անգլերեն համացանցային հաղորդակցության լեզվական և արտալեզվական գործոնների որոշարկմամբ՝ հարալեզվական միավորների կիրառության հաշվառումով: Նոր է նաև համացանցային դիսկուրսի քննությունը հաղորդակցական նպատակի վերհանման դիրքերից: Ըստ էության փորձ է արվում նորովի սահմանել դիսկուրսի այս տեսակը՝ հաշվի առնելով բանավոր և գրավոր խոսքին բնորոշ յուրահատկությունները:

Աշխատանքի ***մեթոդաբանական հիմքը*** պայմանավորված է ատենախոսության մեջ առաջադրված նպատակներով և խնդիրներով: Ուսումնասիրությունը տարվում է լեզվագործաբանական մեթոդի կիրառմամբ, որը հնարավորություն է տալիս երկխոսական միավորների նմուշները հետազոտել տարաժամանակյա և համաժամանակյա հաղորդակցական իրադրություններում: Աշխատանքում կիրառվել է նաև հարատեքստային-նկարագրական

մեթոդը, կատարվել է խոսընթացի լեզվագործաբանական վերլուծություն համատեքստի և հարատեքստի գիտելիքային դաշտի կիրառմամբ:

Ատենախոսության **տեսական արժեքը** պայմանավորված է տարածամանակյա և համաժամանակյա հաղորդակցության համապարփակ ուսումնասիրության ընձեռած հնարավորությամբ, որի շնորհիվ լրացվում և գրեթե ամբողջությամբ ի մի են բերվում համացանցային լեզվաբանության մեջ առկա բազմաթիվ հիմնարար տեսական դրույթներ: Սույն հետազոտությամբ կատարված քննությունը և ստացված արդյունքները որոշակի ներդրում են համացանցային լեզվաբանության և դիսկուրսի տեսության մեջ, քանի որ հնարավորություն են տալիս նորովի մեկնաբանելու համացանցային հաղորդակցության տարատեսակները:

Աշխատանքը ստեղծում է **կիրառական** լայն հնարավորություններ: Ստացված արդյունքները կարող են ներդրվել և մեծ արդյունավետությամբ կիրառվել բուն համացանցային հաղորդակցության մեջ՝ նպաստելով համացանցում հաղորդակցվող ոչ հմուտ օգտատերերին հաղորդակցությունը ճիշտ ընկալելու և համացանցային քաղաքավարության նորմերը կիրառելու գործընթացում: Ուսումնասիրության արդյունքները կարող են ներդրվել նաև անգլերենի առցանց դասավանդման գործնական դասընթացներում, համացանցային դիսկուրսի տեսության խնդիրները լուսաբանող տեսական դասընթացներում և համապատասխան ուսումնամեթոդական ձեռնարկներում:

Հետազոտության **փաստական նյութը** տարածամանակյա և համաժամանակյա դիսկուրսից քաղված հաղորդակցական միավորներն են:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք, ըստ անհրաժեշտության, բաժանվում են ենթագլուխների, ուսումնասիրության հիմնախնդիրները լուսաբանող և լրացնող ծանոթագրություններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլուխը («Համացանցային հաղորդակցության տեսական արժեքներ») բաղկացած է երեք ենթագլխից: **Առաջին ենթագլուխը** («Համացանցային հաղորդակցության սոցիալ - հոգեբանական առանձնահատկություններ») նվիրված է տեղեկատվության ապակողավորմանը: Ցանկացած հաղորդակցություն իր բնույթով սոցիալական է, և հաղորդակցության այն սահմանումը, համաձայն որի՝ այն զուտ տեղեկատվություն փոխանցելու միջոց է, այլևս արդիական չէ: Այսինքն՝ հաղորդակցությունը սոցիալ-հոգեբանական գործոնների ակտիվացում է, որտեղ հաջող հաղորդակցական ակտի իրագործումը պայմանավորված է ոչ միայն խոսակիցների ֆիզիկական

ներկայությամբ, այլև նրանցից յուրաքանչյուրին բնորոշ սոցիալական ինքնության առանձնահատկություններով¹ :

Հաղորդակցությունը լուսաբանող սոցիալ-հոգեբանական կադապարներում հատկապես շեշտվում է հարատեքստի դերը, կարևորվում ֆիզիկական այն միջավայրը, որտեղ անմիջականորեն տեղի է ունենում հաղորդակցությունը, տարածական ու ժամանակային, հարատեքստային ցուցիչների ակտիվ մասնակցությամբ: Սոցիալ-հոգեբանական կադապարները հնարավորություն են ընձեռում նկարագրելու հաղորդակցական միջավայրի բնույթը բնորոշող լեզվական և հասարակական առանձնահատկությունները:

Փորձարարական ուսումնասիրությունների արդյունքում լեզվաբանները, համեմատելով առկա համացանցային հաղորդակցության յուրահատկությունները ոչ համացանցային հաղորդակցության գրավոր այլ նմուշների հետ, գալիս են այն համոզման, որ սոցիալական գործոնների և տեղեկատվության հագեցվածության տեսակետից դրանց միջև առկա տարբերությունները էական են: Տվյալ դեպքում սոցիալական գործոնը դրսևորվում է օգտատերերի սոցիալական իրազեկվածությամբ, տեղեկատվությունը ճիշտ ներկայացնելու ճանաչողական-հաղորդակցական կարողությամբ, ինչպես նաև համացանցում առկա տարբեր թեմաների համապատասխան մեկնաբանություն տալու հմտությամբ²:

Համացանցային և առերես հաղորդակցության միջև տարբերություններից գատ գոյություն ունեն նաև որոշակի նմանություններ: Ակնհայտ է, օրինակ, որ առերես հաղորդակցությունը տեղի է ունենում համագործակցային միջավայրում, որտեղ խոսակիցները շարունակ վերադասավորում են հաղորդակցական ակտերը՝ հաշվի առնելով դիմացինի շահերը:

Փորձելով սահմանել համացանցային հաղորդակցությունը՝ առանց անտեսելու այն անքակտելի կապը, որը գոյություն ունի ինքնադիսկուրսի և դրա դրսևորման միջև՝ կարելի է եզրակացնել, որ համացանցային հաղորդակցությունը խոսընթացի վիրտուալ տարատեսակ է, որտեղ առկա են հաջող հաղորդակցությանը նպաստող որոշակի կանոններ: Համացանցի առկայությունն ինքնին անհամաչափ հարաբերություններ է ստեղծում տեղեկատվություն փո-

¹ Rimé B. Langage et communication [Language and communication] // Moscovici S. (ed.), Psychologie sociale [Social psychology]. Paris: PUF, 1984.

² Galimberti C. Dalla comunicazione alla conversazione [From communication to conversation] // Ricerche di Psicologia, 18 (1), 1994.

խանցողի և դրա հասցեատիրոջ միջև:

Երկրորդ ենթագլուխը («Համացանցային դիսկուրսի տեսական սահմանումները միջգիտակարգայնության տեսանկյունից») նվիրված է համացանցային դիսկուրսի միջգիտակարգային քննությանը: Համացանցային հաղորդակցության ընթացքում, որն ըստ էության տեղեկատվության փոխանակում է երկու կամ ավելի մարդկանց միջև, հասցեագրողը հաղորդագրություն է ուղարկում գրուցակցին, սակայն հաղորդակցությունը չի սահմանափակվում զուտ լեզվական միջոցների կիրառմամբ (բառեր, նախադասություններ և այլն), քանի որ այն կախված է ոչ միայն համատեքստից, այլև արտալեզվական միջոցներից: Այս բազմագործառույթ գործընթացի իրականացումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, թե ի՞նչ են ցանկանում գրուցակիցները միմյանց հայտնել: Հետևաբար այն չի կարող տեղի ունենալ հասարակական շփումից դուրս, հատկապես, որ լայն առումով այն դառնում է գրուցակցի կամ գրուցակիցների վարվելակերպի ու վերաբերմունքի վրա որոշակի ազդեցություն գործելու միջոց:

Համացանցային դիսկուրսում ոչ ստանդարտ լեզվական միավորների կիրառումը պայմանավորված է օգտատերերի՝ ստեղծնաշարը տնտեսելու ցանկությամբ, ինչպես նաև բանավոր խոսքին բնորոշ առանձնահատկությունները հաղորդակցության մեջ ներմուծելու մտադրությամբ: Ուսումնասիրությունները հաստատում են, որ համացանցային հաղորդակցությունն իր անմիջական ազդեցությունն ունի դիսկուրսի սույն տարատեսակի վրա: Բանն այն է, որ տեքստատեղծման միջոցներով հաղորդակցություն իրականացնողները լայն հնարավորություն ունեն հաղորդվող տեղեկատվությունը խմբագրելու, վերադասավորելու և այլ փոփոխություններ կատարելու, մինչդեռ համացանցային հաղորդակցությունը և հատկապես դրա համաժամանակյա իրականացումը չունի այս հնարավորությունը: Այստեղ խոսքահերթի տեմպը շատ ավելի արագ է, քան սովորական գրավոր խոսքինը, սակայն իրեն բնորոշ արագությամբ հանդերձ համացանցային հաղորդակցությունը նույն տեմպը չունի, ինչ բանավոր առերես հաղորդակցությունը, քանզի ստեղծնաշարելն ավելի դանդաղ գործընթաց է, քան խոսելը: Բացի այդ՝ համացանցային դիսկուրսի յուրահատկություններից է նաև այն, որ վերջինս, հնարավորություն է ընձեռում մի շարք խոսակիցների միաժամանակ հաղորդակցվելու: Հաղորդակցության այս միջոցները առկա են միայն վիրտուալ իրականության մեջ, որտեղ մի քանի խոսընթացի միաժամանակյա իրականացումը միանգամայն հնարավոր է և

ընդունելի³:

Լայն տարածում ունեցող մեկ այլ լեզվական դրսևորում է տեքստային միջոցներով առողջանական, այդ թվում նաև հարալեզվական միավորների (ծիծաղ, փոթևոց և այլն) արտահայտումը, որի արդյունքում ընդունված ուղղագրական կանոնները կարող են անտեսվել: Այսպես, հետևյալ օրինակում համաժամանակյա զրույցի մասնակիցները քննարկում են Ալֆ մանրապատումը.

does any body remember the sitcom alf

Othhhhh

(20:59)

Smooth

solavita

(20:59)

l rem

onlysocialchat

(20:59)

alf yeah

onlysocialchat

(20:59)

the alien

solavita

(20:59)

hahah damn funny

Համաժամանակյա հաղորդակցությունը սկսում է օգտատերերից մեկը՝ քննարկման թեմա դարձնելով վերոնշյալ մանրապատումը: Արձագանքելով առաջին օգտատիրոջ հարցին՝ խոսակիցներից մեկը կիրառում է քաղաքային (urban) խոսակցական **“smooth”** բառային միավորը, ինչը համապատասխանում է հայերեն **png** սլենգային արտահայտությանը: Մինչդեռ մյուս օգտատերը կիրառում է **“alf yeah”** ասույթը: Երրորդ օգտատերը, միանալով հաղորդակցությանը՝ պարզաբանում է, թե խոսքը որ մանրապատման մասին է՝ կիրառելով **the alien** բառամիավորը: Հաղորդակցությունը եզրափակող ասույթը ներառում է ծիծաղ արտահայտող **hahah** հարալեզվական միավորը: Բերված նմուշում հանդիպում ենք զեղչված ենթակայի և բայ հանգույցի: Նման մարտավարությունը ոչ թե

³ Herring S. C. Interactional Coherence in CMC // Journal of Computer-Mediated Communication, vol.,4 (4), 1999.

<http://jcmc.indiana.edu/vol4/issue4/herring.html> 23.03.2010

արտացոլում է համացանցային դիսկուրսի աղքատիկ լինելու փաստը, այլ օգտատերերի՝ նոր համացանցային միջավայրին հարմարվելու հմտությունը:

Երրորդ ենթագլուխը («Համացանցային քաղաքավարությունը որպես ներդաշնակ հաղորդակցությանը նպաստող գործոն») նվիրված է համացանցային քաղաքավարության մարտավարության կիրառումների և դիտավորյալ խախտումների քննությանը: Համացանցային և առերես հաղորդակցությանը բնորոշ է ևս մի ընդհանրություն՝ քաղաքավարության նորմերի պահպանումը, որը որոշակիորեն նպաստում է ներդաշնակ հաղորդակցության գործընթացին: Համացանցային քաղաքավարական նորմերի (*netiquette*) լուսաբանման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ այս ենթագլխում անդրադարձ է կատարվել նաև անքաղաքավարի, կոպիտ վարքագծի բնորոշումներին: Այսպես՝ անքաղաքավարի վարքագիծը կարելի է բնութագրել որպես սահմանված նորմերի ոտնահարում, ինչի արդյունքում խախտվում է սոցիալական հավասարակշռությունը: Գ. Կասպերը առաջարկում է տարբերակել *ոչ միտումնավոր և միտումնավոր անքաղաքավարության դրսևորումներ*⁴: Առաջինը պայմանավորված է քաղաքավարության կանոնների չիմացությամբ: Եթե խոսողը չի պատկանում նույն լեզվական համայնքին, ապա նրան հասու չեն տվյալ համայնքի անդամների կիրառած լեզվական քաղաքավարության կաղապարները: Համացանցում քաղաքավարի խոսքը կոպիտ խոսքից տարանջատող սահմանը շատ նուրբ է: Այլ կերպ՝ վիրտուալ հեռավորությունը հաղորդակցվողներին հնարավորություն է ընձեռում ավելի ազատ լինել իրենց լեզվական միջոցների ընտրության հարցում, ինչի արդյունքում ի հայտ են գալիս անսպասելի և անկառավարելի խոսքային մարտավարություններ: Այս խոսքային մարտավարությունների շարքին կարելի է դասել *ֆլեյմինգը*, որը լեզվական ագրեսիայի դրսևորում է համացանցային դիսկուրսում: Փորձելով սահմանել այս լեզվական երևույթը՝ Փ. Օ' Սալիվընը և Ա. Ֆլենեգընը ներկայացնում են ֆլեյմինգը բնութագրող տարբեր մոտեցումներ՝ այն որակելով որպես ուղիղ, անհիմն քննադատման դրսևորում,⁵ թշնամական, սադրիչ հղում կամ մեկնաբանություն⁶ և այլն: Ամփոփելով ֆլեյմինգը սահմանող

⁴ Sten Kasper G. Linguistic Politeness: Current Research Issues // Journal of Pragmatics, vol., 14 (2), 1990.

⁵ O'Sullivan P. B., Flanagan A. J. An Interactional Reconceptualization of 'Flaming' and Other Problematic Messages // International Communication Association's Annual Conference. Acapulco, 2000; Provine R. R., Spencer R. & Mandell D., Emotional Expression Online: Emoticons Punctuate Website Text Messages, 2007 //URL: <http://journals.sagepub.com/doi/pdf/10.1177/0261927X06303481> 14.06 2015

⁶ Kollock P., Smith M. Managing the Virtual Commons: Cooperation and Conflict in Computer

տեսական մոտեցումները՝ կարելի է եզրակացնել, որ սույն խոսքային մարտավարությունը, որն առանձնանում է լեզվական անքաղաքավարությամբ և վիրավորական արտահայտություններով, կիրառվում է թե՛ համաժամանակյա և թե՛ տարաժամանակյա հաղորդակցության ընթացքում, երբ օգտատերերը, ֆիզիկական հեռավորության փաստից ելնելով, տուրք են տալիս իրենց բացասական հույզերին և դրսևորում հակահասարակական վարքագիծ: Այսպես՝

*****☉ KILL ALL asians First. THE HOLY Universe ☉***EVIL yellow face crush the space. Ugly eye+++doggy Face Holy War ! Holy War ! Holy War ! China ! China ! China ! China ! China ! China !**

Բերվածը ռասիստական ֆլեյմինգի դրսևորում է: Եթե քննենք նմուշում առկա լեզվական և հարալեզվական նրբերանգները, ապա կտեսնենք, որ հաղորդակցվող ռասիստական բնույթի արտահայտություններ է անում ասիական ծագում ունեցող անհատների մասին **EVIL yellow face crush the space, Ugly eye+++doggy Face** ասույթների միջոցով: Հատկանշական է, որ **EVIL** բառային միավորը ներկայացված է գլխատառերով, որով հաղորդակցվողը ուզում է հասկանալի դարձնել, որ իր խոսքը արտաբերված է գոռոցով: Հակասոցիալական և թշնամական վերաբերմունքի մասին է վկայում, նաև **KILL ALL asians First** ասույթը, որով օգտատերը կրկին իր ռասիստական վերաբերմունքն է արտահայտում ասիացիների նկատմամբ: Հատկանշական է, որ հաղորդակցվողը *ասիացիներ (Asians)* բառը, որն անգլերեն գրավոր խոսքում կիրառվող կանոնի համաձայն պարտադիր կարգով ներկայացվում է մեծատառ, միտումնավոր գրել է փոքրատառով՝ փորձելով նսեմացնել ասիական ռասան և դրան պատկանող անհատներին:

Ֆլեյմինգը կարող է պարունակել թե՛ ռասիստական և թե՛ կրոնական անհանդուրժողականություն արտահայտող լեզվական տարրեր: Այսպես՝ վերոնշյալ օրինակում դրսևորվում է ռասայական խտրականություն, որն արտահայտվում է անհատների այս կամ այն ռասայական պատկանելության քննադատությամբ:

Այսպիսով՝ հարցի տեսական հայեցակետայի ուսումնասիրության և փաստական նյութի շրջանակներում արված դիտարկումների հիման վրա գալիս ենք այն համոզման, որ ցանկացած հաղորդակցական ակտ իրագործվում է սոցիալ-հոգեբանական, մշակութային հենքի վրա, քանի որ համացանցային

լեզուն սոսկ տեղեկատվության փոխանցման միջոց չէ, այլ, լայն իմաստով, խոսող-անհատի արժեհամակարգի դրսևորում:

Երկրորդ գլուխը («Համաժամանակյա և տարաժամանակյա հաղորդակցության յուրահատկությունները համացանցային լեզվաբանության համատեքստում») բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլուխը («Բանավոր և գրավոր խոսքի տարբերությունների քննությունը համացանցային հաղորդակցության տեսանկյունից») նվիրված է գրավոր և բանավոր խոսքի դրսևորումների քննությանը համացանցային դիսկուրսում: Համացանցային դիսկուրսը իր բնույթով բազմաթիվ ընդհանրություններ ունի թե՛ գրավոր և թե՛ բանավոր դիսկուրսի տարատեսակների հետ: Քննելով գրավոր և բանավոր դիսկուրսի փոխկապակցվածության խնդիրը՝ նկատում ենք, որ դիսկուրսի այս տարատեսակները դժվար է հստակ տարբերակել, քանի որ այնտեղ բացակայում են համարժեք նորմերը: Այնուամենայնիվ, համացանցային դիսկուրսի խոսակցականությունը և ոչ պաշտոնական ոճը, տանում են գրավոր և բանավոր խոսքի հարաբերակցության վերազնահատման:

Երկրորդ ենթագլուխը («Հուզանշանների և համացանցային գրաճանաչության փոխկապակցվածությունը վիրտուալ հաղորդակցության մեջ») նվիրված է հուզանշանների, համացանցային գրաճանաչության լուսաբանման հարցին: Համացանցային հաղորդակցության համատեքստում ճիշտ մեկնաբանություններ կատարելու համար զրուցակցից պահանջվում է մի շարք դիսկուրսիվ ռազմավարությունների իմացություն, որոնք այս կամ այն տեսքային հաղորդակցական տարատեսակի անբաժանելի մասն են կազմում: Այդպիսի դիսկուրսիվ մարտավարություններից են հապավումների, համառոտագրությունների, հուզանշանների կիրառումը, տեքստը բանավոր խոսքի յուրահատկություններով օժտելը և այլն: Անհատների ակնկալիքները և նրանց հենքային գիտելիքները ոչ միայն ուղղորդում են հաղորդակցության ընթացքը, այլև մեծ ազդեցություն ունեն զրուցակցին՝ որպես անհատ որակելու գործում: Այլ կերպ՝ օգտատերերը պետք է հմուտ հաղորդակցվողներ լինեն համացանցային միջավայրում, որպեսզի կարողանան տեղին խոսքային մարտավարություն, դիսկուրսիվ նորմեր կիրառել, որոնք իրենց հերթին խիստ տարբերվում են բանավոր խոսքում առկա հաղորդակցական ռազմավարություններից, այսինքն՝ օգտատերերը պետք է տիրապետեն համացանցային գրագիտության կանոններին: Թերևս սույն գործոնով է պայմանավորված այն փաստը, որ չատսենյակների օգտատերերը որոշակի չափորոշիչներ են սահմանում, որոնց հիման վրա էլ խոսքային մարտավարությունները կիրառվում և մեկնաբանվում են: Նշանները, հապավումները համացանցային գրաճանաչության բաղկացուցիչներից են, քանի որ, ինչպես ակնհայտ է դառնում համաժամանակյա փաս-

տական նյութի քննությամբ, օգտատերերը հիմնականում կիրառում են սույն միջոցները որպես համացանցային դիսկուրսիվ մարտավարություն, որն էլ նպաստում է համացանցային հաղորդակցության արդյունավետ կայացմանը:

Ակնհայտ է, որ համաժամանակյա դիսկուրսի ստորև բերվող նմուշը ճիշտ ընկալելու համար պետք է տիրապետել համացանցային գրագիտությանը.

MykeHey

ninaHi

MykeHow are you?

ninaFine and you??

MykeMe too

MykeWhere are you from?

ninaUK

MykeIndai

MykeIndia *

Բերված զրույցում հաղորդակցվողները փորձում են ծանոթանալ միմյանց հետ՝ կիրառելով ողջույնի ծիսականացված արտահայտություններ: Չրույցը եզրափակող հատվածում առկա է աստղանիշ, ինչը կրում է մի քանի իմաստ և կարող է թյուրիմացության պատճառ դառնալ համացանցային գրաճանաչությանը չտիրապետող զրուցակցի համար: Այստեղ Մայքը լեզվական միավորի վերջում աստղանիշ կիրառելով՝ ուղղում է իր իսկ թույլ տված ուղղագրական սխալը: Եվ եթե Նինան նորելուկ լիներ համացանցային տիրույթում, ապա նրա համար սույն նշանի կիրառումը անհասկանալի կլիներ:

Համացանցային հաղորդակցության մերձակցությունը բանավոր խոսքին նկատելի է նաև այն առումով, որ երկու դեպքում էլ կիրառվում են նույն խոսքային մարտավարությունները, որոնք հնարավորություն են տալիս զրուցակցին ճիշտ մտահանգումներ կատարելու, թեև դրանց կիրառման մոդելները որոշակիորեն տարբերվում են. չատ-սենյակի օգտատերերը նախընտրում են կիրառել որոշակի լեզվական միջոցներ, որոնք լիովին կարտահայտեն վերջիններիս հաղորդակցական նպատակը՝ դրդելով խոսակցին ճիշտ մեկնաբանել հաղորդվող տեղեկատվությունը: Չրուցակիցներն այս դեպքում պետք է ծանոթ լինեն համացանցային հաղորդակցությունը սահմանող օրինաչափություններին: Այլ կերպ՝ նրանք պետք է կարողանան ընկալել հապավումներին, համառոտագրություններին և հուզանշաններին ներհատուկ իմաստները և ի վիճակի լինեն հարթելու հաղորդակցության ընթացքում առաջացող ցանկացած ծրագրային խնդիր: Կարևոր է նաև այն, որ տեղեկատվությունը օգտատերերի ճանաչողական համակարգի մասը կազմի, այսինքն՝

չատ-սենյակների օգտատերերը պետք է ունենան համապատասխան համա-
ցանցային գրագիտություն⁷:

Հուզանշանները, ըստ էության, փոխարինում են հարալեզվական և ոչ լեզ-
վական միջոցներին և, խոսքային իրադրությամբ պայմանավորված, կարող են
արտահայտել տարբեր իմաստային նրբերագնքեր: Լայն առումով՝ հուզանշան-
ները շարժական հուզապատկերների հետ մեկտեղ մատնանշում են խոսակից-
ների հուզական ներաշխարհը: Դրանք իրենց իմաստային յուրահատկություն-
ներով և ձևով բազմազան են, հիմնականում ստեղծվում են տառաթվային
նիշերի (ASCII) օգնությամբ, մինչդեռ այսպես կոչված հուզանշան-նորաբանու-
թյունները պատկերային փոփոխությունների են ենթարկվել, ինչպես օրինակ՝
☺: Հուզանշանների աճող քանակը ընդգրկում է իրական աշխարհից վերցված
տարբեր առարկաներ սրտի, բաժակի կամ շենքի տեսքով, սակայն գերակշռող
մասը դիմախաղի արտահայտչամիջոցներ են: Հետաքրքրական է, որ հուզա-
նշանների տարատեսակներում դրսևորվում են միջմշակութային հաղորդակ-
ցական ոճերի տարբերություններ, ինչպես, օրինակ, շրջված ժպիտի նշանում,
որը ծագել է արևմտյան մշակույթում և հիմնականում գործածվում է արևմտյան
մշակույթը ներկայացնող անհատների խոսքում: Արևելյան հուզանշանների
տարատեսակներից է կամոջին (kamoji), որն արտահայտում է արևելյան դիմա-
գծերի առանձնահատկություններ (^_^): Ժպտացող և խոժոռ դեմքի հուզա-
նշաններն այս դիմային հուզանշանի տարբերակներն են, որոնք գործածվում
են թե՛ համաժամանակյա և թե՛ տարաժամանակյա համացանցային դիսկուր-
սի տարատեսակներում: Այսօր հուզանշաններն իրենց տարածումն են գտել
նաև համացանցային դիսկուրսից դուրս՝ ձեռագիր գրառումներում, գովազ-
դային թռուցիկներում, հրավիրատոմսերում և այլն:

Ի սկզբանե հուզանշանները դիմախաղ արտահայտող նշաններ են եղել,
որոնց նպատակն էր արտահայտել ոչ լեզվական տեղեկատվություն՝ մի բան,
որ առերես հաղորդակցության ընթացքում արտահայտվում է դիմախաղային և
շարժաբանական ցուցիչների միջոցով: Հուզանշանները, որոնք ըստ էության
նշանների համակցում են, կարող են դրական կամ բացասական ազդեցություն
ունենալ ամբողջ հաղորդագրության բովանդակության վրա: Հետևաբար հարց
է ծագում, թե ի՞նչ հուզական արժեք կարող են ունենալ այս նշանները, երբ
դրանք համադրվում են լեզվական հաղորդագրությունների հետ: Ուսում-
նասիրությունը բերում է մեզ այն համոզման, որ այս բաղադրիչների՝ հակա-

⁷ Yus F. Cyberpragmatics: Internet-Mediated Communication in Context, John Benjamins
Publishing, 2011.

ռակ հուզական բևեռներում (դրական և բացասական) գտնվելու պարագայում հաղորդագրությանը անհրաժեշտ հուզական գնահատական տալու համար ավելի է կարևորվում լեզվական միավորների դերը: Ինչպես Ս. Հերինգը, այնպես էլ Ռ. Փրովայնը էական են համարում հուզանշանների հուզական գործառույթը: Նրանք վստահ են, որ հուզանշանները գրեթե երբեք չեն խոչընդոտում հաղորդագրության փոխանցումը, ինչպես, օրինակ, ծիծաղը չի ընդհատում զրույցը բանավոր խոսքում⁸: Ընդ որում՝ այս երևույթը բացատրվում է լեզվական միավորների տեղին կիրառությամբ, քանի որ միայն անհատի հուզական դաշտի արտահայտումը բավարար չէ համապատասխան գործառույթն իրացնելու համար:

Ուսումնասիրությունների նոր ու հետաքրքիր դաշտ է բացում հուզանշանների քննության գենդերային մոտեցումը: Այս բնագավառում ընդունված համատարած կարծիքի համաձայն՝ կանայք ավելի են հակված արտահայտելու իրենց հույզերը, քան տղամարդիկ: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված առումով առկա է տոկոսային չնչին տարբերություն, և որ ամենակարևորն է, հաղորդագրության հուզական ներիմաստը միայն հուզանշանների կիրառումից չի կախված: Այստեղ կարևոր նշանակություն ունի համացանցային հաղորդակցության ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական հենքը: Հուզանշանները կարող են դիտարկվել նաև որպես քաղաքավարության ցուցիչներ, ուստի դրանց սոցիալ-ճանաչողական յուրահատկությունները էլեկտրոնային զրույցների բաղադրիչներից են: Ինչպես արդեն նշել ենք, հուզանշանների կիրառումը կարող է տարբերվել՝ պայմանավորված այնպիսի արտալեզվական գործոններով, ինչպիսիք են անհատի սեռը, տարիքը և հասարակական դիրքը, ռասայական պատկանելությունը և այլն: Մեր քննությունը ցույց է տալիս, որ զրուցակիցների սեռը որոշակի դեր, այնուամենայնիվ, խաղում է հուզանշանների ընտրության հարցում: Եթե արական սեռի զրուցակիցը հաղորդակցվում է իգական սեռի զրուցակցի հետ, նա հակված է ավելի շատ հուզանշաններ կիրառել, ինչպես համացանցային դիսկուրսի հետևյալ հատվածում.

Արական: Վասաայ

⁸ Herring S. C. Functions of the Nonverbal in CMC: Emoticons and Illocutionary Force // Communication Theory, vol.,20, 2010.

Provine R. R., Spencer, R. & Mandell D. Emotional Expression Online: Emoticons Punctuate Website Text Messages // Journal of Language and Social Psychology, vol., 26 (3), 2007.



Տվյալ նմուշում գրուցակիցները խոսում են որոշակի թեմայի շուրջ: Արական սեռի օգտատերը, կիրառելով ծիծաղ արտահայտող հուզանշաններ, որոնց քանակը չի սահմանափակվում մեկով, իր վերաբերմունքն է արտահայտում քննարկվող հարցի շուրջ: Ըստ որոշ լեզվաբանների՝ արական սեռի ներկայացուցիչները հուզանշաններ օգտագործելով՝ ջանում են խոսքն ավելի հեղինակաճ դարձնել, սակայն դժվար չէ նկատել, որ բերված օրինակում գրուցակիցը ի ցույց է դնում իր դրական հույզերը, ինչի ապացույցն էլ հուզանշանների և հարալեզվական միջոցների բազմակի կիրառությունն է: Հասովածում առկա է նաև ծայնավորի կրկնություն:

Ստորև բերվող օրինակը նույնպես, հուզանշանի բազմակի կիրառությունից բացի, պարունակում է նաև ծայնավորի կրկնություն, որը միտված է լրացնելու համացանցային դիսկուրսում հարալեզվական միջոցների բացակայությամբ առաջացած բացը: Այսպես՝

Արական: Չէէէէ

Հանձնել ա հանրային դատին

Այստեղ տառերի կրկնությամբ ասույթն ավելի տպավորիչ դարձնելու նպատակադրություն կա: Սույն օրինակում ծայնավորի կրկնությունը մասնավորապես կիրառվում է տեքստին՝ բանավոր խոսքին բնորոշ հնչերանգային նրբերանգներ հաղորդելու համար, որը համացանցային դիսկուրսում նաև շեշտի գործառույթ է կատարում:

Մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել տեքստային այսօրինակ միջոցների տարաբնույթ դրսևորումներ: Հատկապես լայն կիրառություն ունեն բառամիավորների արտասանական յուրահատկություններով պայմանավորված ուղղագրական սխալները, ինչպես, օրինակ, imail (e-mail [!:meil]), ded room (dead room [dedru:m]), առօրյա-խոսակցական ոճին բնորոշ գրառումները (what d'yu wanna do? (What do you want to do), բարբառային նմուշների կիրառությունները, որոնցով օգտատերերին հաջողվում է տեքստային միջոցներով փոխանցել բարբառի հնչյունական առանձնահատկությունները, ինչպես օրինակ “YASS”, որը շոտլանդական անգլերենի կիրառություն է, կամ “wanna hear that maniac”, որը բնորոշ է աֆրո-ամերիկյան անգլերենին: Հանդիպում են նաև ծայնի առոգանական նրբերանգները փոխանցող ուղղագրական դրսևորումներ, որոնք արտահայտվում են կետադրական նշանների, մեծատառերի, տառակրկնության կիրառություններով:

Այսպիսով՝ լեզվական և ոչ լեզվական միջոցների համալիր կիրառությունը համացանցային դիսկուրսում ընդհանրապես և չատ-սենյակներում իրականացվող դիսկուրսում մասնավորապես բացահայտում է բանավոր խոսքի տարաբնույթ նմուշների առկայություն, որը միտված է արտահայտելու հասցեա-

գրողի վերաբերմունքը փոխանցվող տեղեկատվության առնչությամբ, հատկապես, եթե փոխանցվող հաղորդագրության բովանդակությունը ներակա է դրսևորվում: Այս միջոցների կիրառությունը օգնում է հասցեատիրոջը համապատասխանաբար մեկնաբանել հասցեագրողի արտահայտած վերաբերմունքն ու հույզերը, ընդ որում համացանցային տեքստի տարաբնույթ ձևափոխումները մեծապես պայմանավորված են արտահայտվող վերաբերմունքի կամ հույզի ուժգնությամբ և կարող են որոշակի դեր խաղալ վերաբերմունքի սաստկացման հարցում:

Երրորդ ենթագլուխը («Էլեկտրոնային նամակների և մեկնաբանությունների ժանրային յուրահատկությունները») նվիրված է էլեկտրոնային նամակների լեզվաոճական բնութագրի քննությանը: Հայտնի է, որ ըստ հաղորդակցության դինամիկայի՝ էլեկտրոնային նամակները կարող են բնութագրվել տարածամանակյա հաղորդակցության հատկանիշներով կամ դրսևորվել համաժամանակյա հաղորդակցության յուրահատկություններով: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, առաջին դեպքում էլեկտրոնային նամակներում գերակայում են գրավոր խոսքին բնորոշ ձևեր, մինչդեռ երկրորդ դեպքում խոսքի սույն ժանրային տարատեսակի համար բնութագրական են դառնում բանավոր խոսքի յուրահատկությունները:

Էլեկտրոնային նամակների գործունեության հետագա փուլերում հասարակական կյանքի զարգացման տեմպին զուգընթաց էական կարևորություն ձեռք բերեց ժամանակի խնայողության գործոնը, որն էլ աստիճանաբար որոշիչ ազդեցություն թողեց էլեկտրոնային նամակների ոճաժանրային յուրահատկությունների վրա: Ինչպես ցույց է տալիս փաստական նյութի մեր քննությունը, էլեկտրոնային նամակների խոսքի գրավոր ձևերն իրենց տեղը զիջեցին բանավոր, խոսակցական, ոչ պաշտոնական ձևերին, և այս փոխակերպումները նամակը ընդհուպ մոտեցրին էլեկտրոնային հաղորդակցության ժանրին՝ այն օժտելով ակնհայտ դինամիկայով և որոշակիորեն կրճատելով հաղորդակցությանը տրամադրվող ժամանակը: Բերենք մի օրինակ.

Phillip,

We have been working on different apartments today and having to listen to different, people about what Mary is saying should i be worried? ants seem to be invading my apartment.You got my other fax's Wade is working on the bulletin board that I need up so that I can let tenants know about what is going on.Gave #25 a notice about having to many people staying in that apt and that problem has been resolved. Also I have a tenant in #29 that is complaining about #28 using fowl language.I sent #28 a lease violation we will see how that goescall you tomorrow

Thanx Lucy

Վելուծելով էլեկտրոնային հաղորդակցության սույն նմուշը՝ կարող ենք փաստել, որ վերջինս պարունակում է բանավոր խոսքի որոշ հատկանիշներ: Նախ և առաջ նամակի հեղինակը, խախտելով նամակներին հատուկ ձևաչափը, նրանում չի ընդգրկել ողջույնի խոսք: Նամակում հասցեագրողը կիրառում է *have to* մոդալ բայի ներկա վաղակատար շարունակականի ձևը, որն ակտիվ գործածություն չունի լեզվում: Ուշադրություն է գրավում *fax's* գործածությունը *fax* գոյականի հոգնակի *faxes* ձևի փոխարեն, որը խոսքի անփույթ կիրառության նշան է, թեև այդ կիրառության հիմքում հարկ է տեսնել այդ երկու ձևերի նույնահնչության փաստը: Կետադրական նշանները սույն նամակում սխալ են կիրառված. հեղինակը ստորակետ է դրել *different people* որոշիչ որոշյալ կապակցության մեջ (*different, people*), որը լիովին հակասում է որոշիչ որոշյալ շարահյուսական կապի սերտության դրույթին, իսկ *I sent #28 a lease violation* նախադասության վերջում բացակայում է վերջակետը: Ստորակետը բացակայում է նաև երկու համադաս նախադասություններ իրար կապող համադասական շաղկապից առաջ, ինչը անհրաժեշտություն է, եթե երկրորդ համադաս նախադասության մեջ ենթական փոխված է (*many people staying in that apt and that problem has been resolved*): Կետադրված չեն նաև հաջորդող նախադասությունները, որոնցից վերջինում բացակայում է նաև ենթական (*I sent #28 a lease violation / we will see how that goes / call you tomorrow*): Փոքրատառով գրված *I* անձնական դերանունը (*Mary is saying should i be worried?*) նույնպես պաշտոնական գրագրության մեջ անընդունելի է: Տեսանելի է նաև այն, որ սույն հատվածում պատշաճ կերպով չեն կիրառված մակբայները: *Also* մակբայը տեղադրված է նախադասության սկզբում, որն ըստ էության ընդունելի չէ ըստ անգլերենի շարադասության սահմանված կանոնի: *Gave #25 a notice about having to many people staying inthat apt and that problem has been resolved* ասույթում սխալ է նաև *to* միավորի կիրառությունը (*to many people staying...*): Ասույթի բովանդակությունից կարելի է կռահել, որ այստեղ պահանջվում է *too* մակբայի գործածություն, քանի որ հասցեագրողի նպատակն է շեշտադրել կենվորների անթույլատրելի կուտակումը հյուրատան տվյալ համարում, ինչն էլ ըստ երևույթին պատճառ է դարձել հյուրատան խաղաղ ու անաղմուկ մթնոլորտի խաթարման համար և հարուցել է մյուս կենվորների դժգոհությունը: Էլեկտրոնային հաղորդակցության այս նմուշում նկատելի է խոսակցական և համացանցային սլենգի այնպիսի տարրերի առկայություն, ինչպիսիք են *thanx* և *fowl language*:

Հատկանշական է, որ էլեկտրոնային նամակները և մեկնաբանությունները, լինելով տարածամանակյա հաղորդակցության տեսակ, նույնպես առանձնանում են բանավոր խոսքին բնորոշ գծերով, երբ հաղորդակցվողները հնարավորություն ունեն իրենց խոսքը նախօրոք պլանավորելու և խմբագրելու:

Երրորդ գլուխը («Լեզվական տնտեսումը համացանցային դիսկուրսում») բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլուխում («Ձեռնումը որպես լեզվական տնտեսման միջոց») քննվում են զեղչման դրսևորումները համացանցային դիսկուրսում: Քննության առնելով շարահյուսական զեղչման՝ որպես լեզվական երևույթի առանձնահատկությունները՝ կարելի է վստահաբար ասել, որ վերջինս կոնկրետ կանոնակարգված չափորոշիչների ենթարկվող երևույթ է: Նախադասության զեղչումը անմիջականորեն կապվում է նախադասության ստորոգյալով արտահայտված գործողության եղանակի հետ, հատկապես *այո/ոչ* հարցերի դեպքում: Ըստ էության կարելի է տարբերակել զեղչման մի քանի տարատեսակ. *այո/ոչ* հարցերի զեղչում, “*wh*” հարաբերական և հարցական դերանուններով կազմվող մասնավոր հարցերի զեղչում, բայի լրացման զեղչում (VP) և բացակը (gapping): Քննենք համացանցային դիսկուրսից վերցված հետևյալ նմուշը.

The Raven was always my favorite 01/08/2017 7:52:am

guest*G : 🍌 01/08/2017 7:52:am

guest*G : Mine too 01/08/2017 7:52:am

Pepsi*G : 🍌 01/08/2017 7:52:am

maniac*G : mine golden bug 01/08/2

Միանգամից կարելի է նկատել, որ բերվածը համաժամանակյա հաղորդակցության օրինակ է, որտեղ զեղչված միավորի իմաստն ընկալելի է նախորդող ասույթի (*The Raven was always my favorite*) շնորհիվ: Լայն հարատեքստի ընդգրկմամբ հասկանում ենք, որ հաղորդակցվողները քննարկում են է. Ա. Պոլի ստեղծագործությունները, և, ի պատասխան սույն մեկնարկային ասույթի (*The Raven was always my favorite*), անանուն օգտատերը նույնպես իր հավանությունն է տալիս մյուս օգտատիրոջ նախասիրություններին՝ կիրառելով *mine too* զեղչված ասույթը, որտեղ բացակայում է *to be* բայ հանգույցը: Մյուս՝ *maniac*G* անունով օգտատիրոջ կիրառած բացակը *mine golden bug* ասույթում նույնպես հասկանալի է դառնում մեկնարկային ասույթի բայ հանգույցի օգնությամբ: Հատվածի քննությունը բերում է մեզ այն համոզման, որ բացակի կիրառությունը հնարավոր է միայն այն դեպքում, եթե նախորդող նախադասության մեջ առկա է բացահայտ կերպով արտահայտված հարաբերյալ:

Ինչպես վկայում է փաստական նյութի վերլուծությունն ընդհանրապես, համացանցային դիսկուրսում զեղչման այս տարատեսակը չափազանց արդյունավետ և կիրառելի միջոց է լեզվական տնտեսման առումով, քանի որ այն հնարավորություն է տալիս օգտատերերին ստեղնաշարը խնայելու և հաղորդակցական գործընթացը տվյալ համատեքստում անխափան պահելու:

Երկրորդ ենթագլուխը, («Հապավումների և համառոտագրությունների գործաբանական-հանրալեզվաբանական դրսևորումները») անդրադառնալով հապավումների և համառոտագրությունների քննությանը, շեշտադրում է այն փաստը, որ համացանցային հաղորդակցության մեջ դրանց հիմնական գործառույթը նույնպես ժամանակ և էներգիա խնայելն է: Սակայն դրանց լայն կիրառությունը պայմանավորված է նաև հասարակական գործոնով: Օգտատերերը դրանց կիրառմամբ՝ նպատակ են հետապնդում ցույց տալու, որ համացանցային դիսկուրսի հմուտ լեզվակիր են կամ գիտակ: Ինչպես առերես հաղորդակցության ժամանակ, այնպես էլ համացանցային դիսկուրսում համառոտագրությունները և հապավումները գործածվում են մատնանշելու անհատի՝ որևիցե համացանցային խմբի պատկանելի:

Մեր կատարած ուսումնասիրությունները թույլ են տալիս նկատել, որ ինչպես ասույթները, այնպես էլ հապավումներն ու համառոտագրությունները կարող են օգտատերերի մասին որոշակի տեղեկատվություն հաղորդել: Այսինքն՝ որքան հազվագյուտ հապավում, համառոտագրություն է կիրառվում, այնքան ավելի ակնհայտ է դրսևորվում օգտատիրոջ հաղորդակցական հմտությունը:

Հապավումները համացանցային հաղորդակցության մեջ չեն սահմանափակվում բառերի կամ արտահայտությունների սկզբնատառերի կրճատմամբ: Օրինակ, զրույցներում կարող են կրճատվել, հապավվել ամբողջական նախադասություններ: Հաշվի առնելով համացանցային հապավումների բազմիմաստության իրողությունը՝ գտնում ենք, որ հաղորդակցության հաջող իրականացման հասնելու համար անհրաժեշտ է հապավումների ներիմաստը հասկանալիս հենվել համատեքստային և հարատեքստային ցուցիչների ընձեռած հնարավորությունների վրա: Ակնհայտ է, օրինակ, որ *tc* հապավումը կարող է տարբեր կերպ մեկնաբանվել (*take care կամ too cool*) կախված հաղորդակցական իրադրությունից: Ինչպես տեսանելի է համատեքստից, կիրառված *tc* հապավումը փոխարինում է հաղորդակցության ավարտ նշող *take care* միավորին, այսինքն՝ հրաժեշտի արտահայտություն է:

iceheart : great 🥰🍷🥰

tc maniac

Սույն համաժամանակյա ասույթում հաղորդակցվողները քննարկում են Հիչքոքի նկարահանած գեղարվեստական «Իսելագար» ֆիլմը: Օգտատերը իր դրական վերաբերմունքն է արտահայտում ֆիլմի վերաբերյալ՝ գործածելով հապավման և հուզանշանի համադրություն: Սակայն, եթե ասույթում առկա չլիներ *great* ածականը, դա կարող էր թուրիմացության պատճառ դառնալ, քանի որ 🥰🍷🥰 *cheers* հուզանշանն էլ իր հերթին բազմիմաստ է: Սույն ասույթում այն կրում է հավանության ներիմաստ, սակայն ինչպես արդեն նշել

ենք, այն կարող է արտահայտել նաև շնորհակալության կամ հրաժեշտի ներիմաստային երանգներ:

Թյուր են այն կարծիքները, որ համացանցային հաղորդակցության մեջ բացակայում են սոցիալական ցուցիչներ, որոնք օգնում են օգտատերերին գործադրելու ճիշտ հաղորդակցական մարտավարություն: Սույն մոտեցումը թերևս կարելի էր ճշմարտացի համարել համացանցային հաղորդակցության զարգացման սկզբնական փուլերում, սակայն, ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը, այժմ համացանցով հաղորդակցվողները չեն անտեսում հարատեքստային ցուցիչները, և հաղորդակցությունն էլ չի իրականանում սոցիալական վակուումում: Ուրիշ խոսքով՝ համացանցով հաղորդակցվողներն ունեն ինքնարտահայտման որոշակի միջոցներ, որոնց հիմքում ընկած են համացանցային քաղաքավարության նորմերը:

Եզրակացության մեջ ամփոփվել են կատարված ուսումնասիրության արդյունքները.

1. Ինչպես առերես հաղորդակցության ժամանակ, այնպես էլ համացանցում հաղորդակցվելիս կարևորվում է հարատեքստը, քանի որ, լինելով հարաշարժ, այն անընդհատ փոփոխվում է և հաղորդակցական ակտերը դասավորվում ու վերադասավորվում են՝ ըստ այդմ ստեղծելով համացանցային «սոցիում»: Վիրտուալ տիրույթում արդյունավետ հաղորդակցությունը և ճիշտ մտահանգումներ կատարելը մեծապես պայմանավորված է անհատ-հաղորդակցվողների հենքային գիտելիքներով, մշակութային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով, ինչպես նաև համացանցային գրաճանաչությամբ:
2. Անզվեր են համացանցային դիսկուրսի տեսական սահմանումների միջգիտակարգային ուսումնասիրությունը, ինչպես նաև փաստական նյութի վերլուծությունը ցույց են տալիս, որ համացանցային հաղորդակցական միջավայրում գերիշխում են բանավոր խոսքի յուրահատկությունները: Լեզվական միավորների կիրառության այս պատկերը բացահայտվում է էլեկտրոնային զրույցներում, նամակներում, այդ թվում պաշտոնական, որտեղ գերիշխողը խոսակցական անզվերենի լեզվաոճական տարրերն են:
3. Բանավոր խոսքային տարրերի գերակայության ակնհայտ դրսևորում է բարդ ստորադասական և համադասական կառույցների բացակայությունը համաժամանակյա և տարաժամանակյա համացանցային դիսկուրսում, մասնավորապես՝ էլեկտրոնային զրույցներում:
4. Համացանցում հաջող հաղորդակցության իրականացման գործում քաղաքավարության գործնի դերը նույնքան մեծ է, որքան առերես հաղորդակցության ժամանակ: Վիրտուալ տիրույթում զրուցակիցները մեծ նշանակություն տալով քաղաքավարությանը՝ կարևորում են խոսքահերթի հնարավորու-

- թյունը՝ ընձեռված տեխնոլոգիական նորամուծությունների շնորհիվ: Անհատի ինքնության զգացողության բացակայությունը որոշ դեպքերում հանգեցնում է հաղորդակցվողների կողմից քաղաքավարության նորմերի ոտնահարման:
5. Համացանցային դիսկուրսում հուզանշանների, շարժական հուզապատկերների կիրառումը հարալեզվական միջոցների փոխարեն բացահայտում է հաղորդակցվողների հոգեբանական, զգացմունքային ներաշխարհը: Դրանց կիրառության յուրահատկությունները մեծապես պայմանավորված են հաղորդակցական իրադրությամբ, զրուցակիցների սեռով և տարիքով :
 6. Լեզվական տնտեսումը՝ որպես համացանցային հաղորդակցության մեջ լայն կիրառություն ունեցող մարտավարություն իրականանում է տարբեր միջոցներով, մասնավորապես՝ զեղչմամբ (ընդ որում՝ առավել տարածում ունեն բայական զեղչումը և բացակը), համառոտագրություններով և հապավումներով:
 7. Համառոտագրությունների և հապավումների լայնածավալ կիրառությունը համացանցային դիսկուրսում պայմանավորված է ոչ միայն ստեղնաշարը խնայելու միտումով, այլ նաև զրուցակիցների հաղորդակցական հմտությունները և այս կամ այն սոցիալական խմբին պատկանելը ի ցույց դնելու նպատակով:

Հետազոտության հիմնադրույթները արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. On Some Linguistic Peculiarities of Internet Slang // Armenian Folia Anglistika. International Journal of English Studies, 1(8), Yerevan, Lusakn, 2011, pp. 49-53.
2. The Language of Synchronous and Asynchronous Interactions of EMC // Armenian Folia Anglistika. International Journal of English Studies, 1-2(11), Yerevan, Lusakn, 2013, pp. 89-92.
3. Առցանց ուսուցման և գնահատման յուրահատկությունների շուրջ // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, N 7, Երևան, Լուսակն, 2016, էջ 153-160:
4. Համացանցային քաղաքավարությունը որպես ներդաշնակ հաղորդակցությանը նպաստող գործոն // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 3(21), Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 45-53:
5. Էլեկտրոնային նամակների ժանրային յուրահատկությունների շուրջ // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, N 8, Երևան, Լուսակն, 2017, էջ 33-39:
6. Հուզանշանները համացանցային լեզվաբանության ըմբռնմամբ // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 2(23), Երևան, ԵՊՀ հրատ., 2017, էջ 146-154:

Linguistic and Extralinguistic Properties of Internet Discourse (with special reference to English)

Summary

The present research studies the characteristics of Internet discourse emerged in recent decades. The focus of the research is the analysis of linguistic and extralinguistic features of electronically mediated discourse. The paralinguistic peculiarities observed in Internet discourse are also given a lot of attention to. Within the scope of the given research, an attempt is made to define Internet discourse from the pragmalinguistic, sociolinguistic and stylistic perspectives.

The object of the research is the manifestations of linguistic, extralinguistic and paralinguistic peculiarities of Internet discourse in synchronous and asynchronous communication. The aim of the given research is to study the verbal and non-verbal means, revealing the semantic fields, as well as the linguistic and extralinguistic features peculiar to oral speech.

To achieve this goal the following objectives have been set forward:

- to investigate the socio-psychological peculiarities of electronically mediated communication (EMC);
- to study the theoretical definitions of Internet discourse from the interdisciplinary perspective and bring to light the uses of the written or oral forms of speech in EMC;
- to study the role of netiquette in EMC;
- to bring out the functional specificities of emoticons, taking into consideration the interlocutors' attitudes and psychological motives;
- to define the linguistic background and communicative goal of e-mails;
- to elucidate the theoretical and practical features of ellipsis as an integral part of EMC;
- to define the role of abbreviations and acronyms in terms of language economy.

The *topicality* of the research is conditioned by the paramount importance of examining EMC. It is also attributed to the fact that the research elucidates all the paralinguistic and extralinguistic features of the discourse.

The *scientific novelty* of the research is determined by the comprehensive study of linguistic, extralinguistic and paralinguistic characteristics of EMC. The novelty of the research is also provided by the study of EMC from the perspective of the speaker's communicative intention. In fact,

an attempt is made to define this variety of discourse, considering the peculiarities common either to oral or to written discourse.

The *methodological framework* of the research is conditioned by the goals and objectives set forward. The pragmatolinguistic method, which enables us to study dialogues in asynchronous and synchronous communication has been applied. Furthermore, the contextual-descriptive method has been used as well.

The *theoretical importance* of the research is accounted for by the fact that the thorough study of synchronous and asynchronous communication can contribute to the development of Internet linguistics which is given so much attention to in contemporary science. The results obtained will add to the understanding of the theory of EMC, defining it in a new light.

The *practical significance* is provided by the fact that the results of the analysis of Internet discourse can be efficiently used to facilitate communication on the Internet, aiding the communicators to obtain additional skills in understanding and using Netiquette and becoming fully integrated in EMC. The results can be applied in online courses of teaching English, in theoretical courses on Internet discourse, as well as compiling textbooks and manuals.

Языковые и неязыковые особенности интернет-дискурса (на материале английского языка)

Диссертация посвящена изучению интернет-дискурса в синхронной и асинхронной коммуникации. **Цель** исследования состоит в изучении языковых и неязыковых характеристик интернет-дискурса посредством выявления речевых и неречевых приемов, их смыслового поля и жанровых особенностей. Для достижения цели исследования в работе ставятся и решаются следующие задачи:

- изучение социально-психологических особенностей интернет-коммуникации;
- анализ теоретических определений интернет-дискурса на стыке различных наук и выявление устных или письменных речевых элементов в интернет-коммуникации;
- определение роли вежливости в интернет-коммуникации;
- изучение функции эмодзи в зависимости от особенностей психологии и отношения собеседников;
- выявление языковой и целевой основы электронной переписки;
- изучение теоретических и практических особенностей эллипсиса как важнейшего элемента интернет-коммуникации;

- определение роли акронимов и аббревиатур в контексте языковой экономики.

Актуальность работы обусловлена все более интенсивным использованием интернет-дискурса в современном мире и, следовательно, настоятельной необходимостью освещения стратегий и тактик применения разнообразных языковых и неязыковых средств в интернет-коммуникации.

Научная новизна работы заключается в комплексном исследовании языковых, неязыковых и параязыковых явлений в интернет-коммуникации, а также в изучении интернет-дискурса с точки зрения цели коммуникации. По существу, делается попытка по-новому определить этот вид дискурса с учетом особенностей, свойственных устной и письменной речи.

Методологическая база работы обусловлена целями и задачами, поставленными в работе. В исследовании применяется лингвопрагматический метод анализа, позволяющий изучать образцы диалогических единиц в синхронных и асинхронных коммуникативных ситуациях. В работе был также применен описательно-контекстуальный метод.

Теоретическая ценность работы заключается в возможности комплексного изучения синхронной и асинхронной коммуникации, благодаря чему дополняются и обобщаются фундаментальные теоретические положения интернет-лингвистики. Проведенное в рамках данной работы исследование и полученные результаты вносят определенный вклад в интернет-лингвистику, теорию дискурса, поскольку дают возможность по-новому осмыслить интернет-коммуникацию.

Практическая значимость исследования обусловлена тем, что результаты изучения интернет-дискурса могут быть успешно применены в интернет-коммуникации, помогать не очень умелым пользователям, общающимся в сети, правильно воспринимать и применять нормы интернет-этики. Результаты исследования могут быть использованы в практических онлайн-курсах английского языка, а также по теории интернет-дискурса. На основе выдвинутых выводов могут быть созданы учебники и учебно-методические пособия.

